ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 332[3]. Փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, սպառնալը

1. Փաստաբանի կամ նոտարի գործունեության իրականացմանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

2. Փաստաբանի կամ նոտարի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա գործունեության իրականացման հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ մեկից երեք տարի ժամկետով:

Հոդված 343. Արդարադատության նկատմամբ անհարգալից վերաբերմունքը

1. *(մասն ուժը կորցրել է 08.02.11 ՀՕ-40-Ն)*

2. Արդարադատության նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով՝ պայմանավորված իրենց դատավարական կարգավիճակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

3. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով:

Comment [U1]: Հոդվածից հանել «Պաշտոնատար անձի կողմից» բառերը

Comment [U2]: «լիազորությունների» բառը փոխարինել «գործունեության »բառով:

Comment [U3]: «լիազորությունների» բառը փոխարինել «գործունեության »բառով:

Comment [U4]: Ավելացնել հետևյալ բառերը:

Comment [U5]: 1)«Դատարանի» բառը փոխարինել «Արդարադատության» բառով:

Comment [U6]: «Դատարանի» բառը փոխարինել «Արդարադատության» բառով

Comment [U7]: Ավելացնել հետևյալ բառերը: